

Ընդունելության թեստի նմուշօրինակ
2018-2019 ուստարի

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ (VIII դասարան)

ՄԱՍ I. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ (1-15)

Ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի համար տրված է պատասխանների 4-ական տարբերակ, որոնցից ճիշտ է միայն մեկը:

1. Ո՞ր թիվը պետք է գումարել $2\frac{2}{3}$ -ին, որպեսզի ստացվի $7\frac{8}{9}$
1) $5\frac{2}{9}$ 2) $5\frac{1}{9}$ 3) $5\frac{4}{9}$ 4) $4\frac{2}{3}$
2. Գտնել ամենամեծ երկնիշ և ամենափոքր քառանիշ թվերի գումարը:
1) 1098 2) 1100 3) 1099 4) 1097
3. m -ի ի՞նչ արժեքի դեպքում է $(2m+1)$ արտահայտության արժեքը 8-ով մեծ $(m+7)$ արտահայտության արժեքից:
1) 14 2) 13 3) 15 4) 30
4. 27 սմ 8 մմ ինչքանո՞վ է մեծ 138 մմ-ից:
1) 13սմ 7 մմ 2) 14 սմ 8 մմ 3) 14 սմ 4) 7 մմ
5. Որքա՞ն է կազմում տոննայի $\frac{27}{100}$ մասը:
1) 27 կգ 2) 2g 7կգ 3) 2g 70 կգ 4) 20g 70 կգ
6. Ո՞ր թվանշանով է վերջանում 5-ի վրա բաժանվող կենտ թիվը:
1) 3 2) 0 3) 5 4) 7

7. Որքանո՞վ է 1-ից տարբեր յուրաքանչյուր բնական թվի հաջորդ թիվը մեծ այդ բնական թվի նախորդ թվից:

- 1) 2 2) 1 3) 3 4) 0

8. Գտնել 20-ից փոքր բոլոր կենտ երկնիշ թվերի գումարը:

- 1) 95 2) 65 3) 85 4) 75

9. 1 մետրի քանի՞ տոկոսն է 1 դեցիմետրը:

- 1) 1 2) 10 3) 11 4) 15

10. 100 կգ ծովաջուրը պարունակում է 15 կգ աղ: Քանի՞ տոկոս է ջուրը ծովաջրում:

- 1) 35% 2) 85% 3) 15% 4) 25

(11-12) Պարզեցնել արտահայտությունը:

11. $a(a - b) + b(a + b) + (a - b)(a + b)$

- 1) $2b^2$ 2) $b^2 + a^2$ 3) $a^2 - b^2$ 4) $2a^2$

12. $(m - n)^2 - (m + n)^2$

- 1) $-4mn$ 2) $4mn$ 3) $2m^2 + 2n^2$ 4) $m^2 + n^2$

(13-15) Հավասարումներ և անհավասարումներ:

13. $\frac{3x+4}{13} = 0$

- 1) $-1\frac{1}{3}$ 2) $1\frac{1}{3}$ 3) $\frac{1}{3}$ 4) $1\frac{2}{3}$

14. $3(x + 1)(x + 2) = 9 + (3x - 4)(x + 2)$

1) $\frac{1}{7}$

2) 1

3) $\frac{5}{7}$

4) $-\frac{5}{7}$

15. Գտնել բոլոր բնական թվերի գումարը, որոնք անհավասարման լուծումներն են հետևյալ:

$$2\frac{3}{4} < x < 9\frac{1}{5}$$

1) 10

2) 41

3) 21

4) 15

ՄԱՍ II. Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքներ (16-20)

(16-20) *Առաջադրանքների կատարման համար յուրաքանչյուր առաջադրանքներից հետո պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացնել լուծման ամբողջ ընթացքը:*

16. AC հիմքով ABC հավասարասրուն եռանկյան մեջ տարված են AF կիսորդը և AH բարձրությունը: Գտնել AHF եռանկյան անկյունները, եթե $\angle B = 112^\circ$

Պատ.՝ -----

17. Երկու նավահանգիստների միջև եղած հեռավորությունը հոսանքի ուղղությամբ ջերմանավն անցնում է 3 ժամում, իսկ հոսանքին հակառակ ուղղությամբ գնալիս՝ 5 ժամում: Գետի հոսանքի արագությունը 5 կմ/ժ է: Որքա՞ն է ջերմանավի արագությունը լճում:

Պատ.՝ -----

18. 1000 դրամը պետք է մանրել 20 դրամ և 50 դրամ մետաղադրամներով այնպես, որ բոլոր մետաղադրամների թիվը լինի 26 հատ: Քանի՞ 20 դրամանոց մետաղադրամ պետք է լինի:

Պատ.՝ -----

19. Որոշ աշխատանք 15 մարդ կարող է կատարել 12 օրում: Քանի՞ մարդ այդ աշխատանքը կկատարի 18 օրում:

Պատ.՝ -----

20. ABC հավասարասրուն եռանկյան AC հիմքը 37 սմ է, իսկ B գագաթի հարակից արտաքին անկյունը 60° է: Գտնել C գագաթի հեռավորությունը AB ուղղից:

Պատ.՝ -----

Մնագրություն